



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

# ՔԱՐՈՋ

## ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ

### ԳԱԼՍՏԵԱՆ ՄԱՍԻՆ\*

«Երբ Երկնաւորը թազաւորներին  
Հաւաքի այնտեղ, Սաղիմի վրայ  
ձիւն կտեղայ»<sup>1</sup>:

Ապաիճենք Սուրբ Հոգի Աստծուն՝ բարի,  
ճշմարիտ եւ առաջնորդող, որպէսզի Նա, Իր  
բարութեամբ ուղղելով մեզ, առաջնորդի դէպի  
ճշմարիտ երկիր<sup>2</sup>: Նա, որ Իսրայէլին առաջնոր-  
դեց դէպի Պաղեստին<sup>3</sup> եւ առաքելներին՝ աշ-  
խարհի չորս ծագերը<sup>4</sup>, որ հովիւներից ու ձկնորս-  
ներից մարգարէներ եւ քարոզիչներ հրաշագոր-  
ծեց<sup>5</sup>, որ բաժանեց լեզուները<sup>6</sup> եւ վերստին միա-  
տրեց ու նորոգեց<sup>7</sup>, որ խուլներին լսել տուեց եւ

\* Տե՛ս «Ջարդ վասն զայստեան Սուրբ Հոգայն» («Գիրք  
քարոզութեան, որ կոչի Զմտեան հատոր», Կ. Պոլիս, 1740,  
գլ. ԸՆԵ, էջ 669):

1 Տե՛ս Սաղմ. ԿԷ 15: Դասթի այս սաղմոսից որպէս քարո-  
զի բնաբան ընտրուած հատուածի զբարբարեան թարգմա-  
նութեան տարբերակը այսօր յայտնի երբայական բնա-  
գրից սկզբունքօրէն տարբերուող բովանդակութիւն ունի եւ  
աւանդաբար մեկնաբանուել է իբրեւ մեսիական մարգա-  
րէութիւն:

2 Այսինքն՝ դէպի երկնի արքայութիւն:

3 Տե՛ս Ել. Գ-ԺԸ, Յես. Ա-ԻԳ:

4 Հմմտ. Մատթ. ԻԸ 19-20:

5 Հմմտ. Երեմ. ԺԶ 16, ԻԳ 2, 4:

6 Նկատի ունի բարբերմեան աշտարակաշինութեան հետե-  
ւանցով տեղի ունեցած լեզուների խառնակումը [տե՛ս Մճ.  
ԺԱ 7-9]:

7 Լեզուների վերստին միաւորում է կոչուած Հոգեզայտի  
պահը, երբ առաքելները սկսեցին քարոզել տարբեր  
լեզուներով [տե՛ս Գործ. Բ 4-14]:

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

**S. S. ԳԱՐԵԳՆԻ Ա**

**ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ**

**ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ**

**ՀԱՅՈՑ**

**ՀՐԱՄԱՆԱԻ**

**S. ՊԱՐԳԵԻԻ**

**ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ**

**ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՐՑԱԽԱՅ**

համբերին՝ խօսել<sup>8</sup>, որ անմիտներին իմաստուն դարձրեց եւ մանուկներին՝ զօրաւոր ու գերաշխարհիկ<sup>9</sup>, նոյն ինքք Տէր Աստուած թող ինձ տայ խրատող լեզու<sup>10</sup>, որպէսզի պատշաճը խօսեմ այս ժամին, իսկ ձեզ՝ սրտի լսելու ականջ<sup>11</sup>, որպէսզի արդիւնաւէտ գործերով պտղաբերէք՝ ըմբռնելով առաջադրուած մարգարէական խօսքը. «Երբ Երկնաւորը թագաւորներին հաւաքի այնտեղ, Սաղիմի վրայ ձիւն կտեղայ»:

Արդ, այս խօսքը մեկնաբանելուց առաջ նախ քննենք յիսուն օրուայ, կիրակիի եւ երրորդ ժամի խորհուրդները (քանզի Սուրբ Հոգու պարգեւը տրուեց Քրիստոսի Յարութեան յիսուներորդ օրը՝ Պենտեկոստէին<sup>12</sup>, որ կիրակի էր, երրորդ ժամին<sup>13</sup>):

**Ա. Սուրբ Հոգու գալուստը եղաւ Քրիստոսի Յարութեան յիսուներորդ օրը:**

Նախ՝ որովհետեւ յիսուն օրը եօթ շաբաթ է՝ մէկ օրով անելի, եւ, ըստ ս. Գրիգոր Աստուածաբանի, եօթը խորհրդանշում է այս կեանքի եօթ դարերը, իսկ ութերորդը՝ հանդերձեալ կեանքի անվախճան Օրը, որ մի է եւ անքակտելի, միաբուն<sup>14</sup> եւ աներէկ<sup>15</sup> լինելով ամբողջացումը միեւնդէն աշխարհի: Այս պատճառով այն օրը եղաւ պատուիչը Սուրբ Հոգու գալուստեան:

Երկրորդ՝ Սուրբ Հոգու էջքը եօթ շաբաթ յետոյ խորհրդանշում է Սուրբ Հոգու եօթնարփեան

շնորհները՝ իմաստութիւն, գիտութիւն, զօրութիւն, հանճար, խորհուրդ, աստուածապաշտութիւն եւ երկիւղ<sup>16</sup>, որոնք տրուեցին առաքեալներին:

Երրորդ՝ Սուրբ Հոգին տրուեց եօթ շաբաթ յետոյ, որպէսզի ցոյց տրուի, որ Նա է Եկեղեցու եօթ խորհուրդների՝ մկրտութեան, դրոշմի, հաղորդութեան, ապաշխարութեան, վերջին օծման, քահանայութեան կարգի եւ պսակի կատարիչը քահանաների միջոցով, ինչպէս որ այն ժամանակ՝ առաքեալների միջոցով:

Չորրորդ՝ եօթ շաբաթը խորհրդանշում է եօթ մահացու մեղքերը՝ հպարտութիւնը, նախանձը, բարկութիւնը, ծուլութիւնը, ազահութիւնը, որկրամոլութիւնը<sup>17</sup> եւ բղջախոհութիւնը<sup>18</sup>, որոնք պիղծ խորհուրդներ են, որ մեր մէջ ենք ընդունում դիւական ոգուց: Եւ սրանք հակառակ են Սուրբ Հոգուն, քանզի Նա փախչում է նենգութիւնից եւ անմիտ խորհուրդներից<sup>19</sup>: Այս պատճառով քանի դեռ այս խաւար խորհուրդները մեր մէջ են, չի իջնում Սուրբ Հոգու շնորհների լոյսը:

Հինգերորդ՝ յիսունը յոբելեանական թիւ է եւ ազատութեան խորհրդանշիչ<sup>20</sup>. ուստի Քրիստոսի Յարութիւնից (որով մեզ յարութիւն եւ անմահութիւն տրուեց) յիսուն օր յետոյ Սուրբ Հոգին իջաւ առաքեալների վրայ եւ մեղքերի թողութեամբ ու զանազան պարգեւներով ազատութիւն տուեց մեզ, ինչպէս ասում է առաքեալը. «Ոչ թէ ծառայութեան հոգին ստացանք, որ դարձեալ վախենանք, այլ՝ որդեգրութեան եւ ազատու-

8 Տե՛ս Մարկ. է 37:

9 Տե՛ս Մատթ. ԺԱ 25:

10 Տե՛ս Եւ. Ծ 4:

11 Տե՛ս Մատթ. ԺԳ 9, 43, Մարկ. Դ 9, 23, է 16, Ղուկ. Ը 8, ԺԴ 35:

12 Տե՛ս Գործ. Բ 1:

13 Տե՛ս Գործ. Բ 15: Երրորդ ժամը համապատասխանում է առաւօտեան ժամը 9-ին:

14 Միաբուն - միասնական

15 Աներէկ - գիշեր չունեցող, մշտական ցերեկ

16 Տե՛ս Եւ. ԺԱ 2:

17 Որկրամոլութիւն - որովայնամոլութիւն, շատակերութիւն, անյագութիւն

18 Բղջախոհութիւն - ցանկասիրութիւն, վառաշոտութիւն, չարախոհութիւն

19 Տե՛ս Իմատ. Ա 5:

20 Տե՛ս Ղե. ԻԵ 10-13:

Վեցերորդ՝ յիսուն թիւը հինգ անգամ տասն է, որ խորհրդանշում է հինգ գատիկները, որոնք ուրախութեամբ տօնելով՝ ընդունում ենք Սուրբ Հոգու շնորհները: Առաջին գատիկը հին բաղարջակերն է, որը հինգշաբթի օրը կատարեց Տէրը Վերնատանը՝ լուանալով աշակերտների ոտքերը եւ աւանդելով իր Մարմնի եւ Արեան խորհուրդը<sup>22</sup>: Երկրորդ գատիկը Քրիստոսի Յարութիւնն է, երբ յարութիւն առաւ մեռելներից եւ իր հետ մեզ էլ յարութիւն տուեց: Երրորդ գատիկն է Նոր կիրակին (որ նաեւ Կրկնագատիկ ենք կոչում), երբ Քրիստոս, մտնելով փակ դռնով, երեսաց աշակերտներին եւ ուրախացրեց նրանց<sup>23</sup>: Չորրորդ գատիկն է ցնծութեամբ եւ փողերի ձայնով առ Հայր համբարձուելը, որով ուրախացան երկնային դասերը: Իսկ հինգերորդը Սուրբ Հոգու էջքն է Վերնատանը, որով առաքեալներն ուրախացան ու զմայլուեցին: Ահա այս ամէնն է խորհրդանշում Պենտեկոստէն, որ հինգ տասն է: Եւ այս հինգ գատիկների միջոցով մենք ուրախանում ենք հինգ զգայարաններով ու նորոգում հոգու եւ մարմնի տասը զգայութիւններով՝ ազատուելով մեղքերից եւ ընդունելով Սուրբ Հոգի Աստծուն:

Եօթերորդ՝ Տէրը համբարձուեց իր Յարութիւնից քառասուն օր յետոյ, ապա ինն օր պատուեց ու պաշտուեց հրեշտակների ինը դասերից եւ տասներորդ օրը նստեց Հօր աջ կողմում, որից յետոյ առաքեց իր խոստացած պարգելը առաքեալներին: Եւ այսպէս արեց, որպէսզի առաքեալները ծարաւեն ու զգուշանան եւ կարօտով ընդունեն Սուրբ Հոգին եւ Նրանով առաջնոր-

դունն նախ՝ անտարանելու եւ քարոզելու տիեզերքով մէկ, եւ ապա՝ ելնելու կենդանեաց երկիր՝ երկնային աշխարհ, ինչպէս ասում է Դաւիթ մարգարէն. «Քո բարի Հոգին թող ինձ առաջնորդի դէպի ճշմարիտ երկիր»<sup>24</sup>: Այս է խորհրդանշում քառասունը, որ չորս տասն է, իսկ միս տասը՝ այն, որ մենք տասնաբանեան Օրէնքը պահելով չորս Աւետարանով՝ մեր տասը զգայութիւնները պիտի մաքրենք Սուրբ Հոգով, որից յետոյ արժանանանք առաջնորդուելու դէպի կենդանեաց երկիր: Այս պատճառով այս օրն իջաւ Սուրբ Հոգին:

Ութերորդ՝ այս օրը իսրայէլացիները պատուեցին<sup>25</sup> երեք պատճառով. նախ՝ որովհետեւ Աստուած այս օրը երեսաց Մովսէսին Սինա լեռան վրայ<sup>26</sup>. երկրորդ՝ այս օրը Մովսէսի միջոցով Օրէնքը տրուեց նրանց<sup>27</sup>. երրորդ՝ այս օրը Աստուած ուխտ դրեց իր ժողովրդի՝ իսրայէլի հետ<sup>28</sup>: Նմանապէս եւ մենք երեք պատճառով պատուեցինք այն. նախ՝ որովհետեւ այս օրը Սուրբ Հոգին իջաւ առաքեալների վրայ եւ լուծարեց ասուածը, թէ՛ «Իմ Հոգին չի՛ մնայ մարդկանց վրայ յաւիտեան»<sup>29</sup>, եւ առաքեալներին Սուրբ Հոգու զանազան պարգեւներ ու շնորհներ տուեց. երկրորդ՝ մեզ այս օրը տրուեց Նոր Օրէնքն ու Աւետարանի քարոզութիւնը. երրորդ՝ այս օրը, ինչպէս ասուեց, հանդերձեալի նախօրինակն է, որովհետեւ յաջորդում է եօթ շաբաթներից, որ խորհրդանշում են աշխարհի ստեղծման եօթ օրերը<sup>30</sup>, ինչպէս նաեւ այս կեանքի եօթ

24 Սաղմ. Ժն 9 10  
 25 Տե՛ս Դե. Ի 9 15-16:  
 26 Տե՛ս Ել. Լ 9 18-23:  
 27 Տե՛ս Ել. Լ 7 28:  
 28 Տե՛ս Ել. Լ 7 10, 27:  
 29 Տե՛ս Ծն. 2 3:  
 30 Տե՛ս Ծն. Ա 1-15:

21 Տե՛ս Հոով. Ը 15:  
 22 Տե՛ս Մարկ. Ժ 7 22-25, Դով. Ի Բ 14-20, Յովհ. Ժ 9 4-15:  
 23 Տե՛ս Յովհ. Ի 19-23:

դարերը: Քանզի ինչպէս Քրիստոսի Յարութիւնից եօթ շաբաթ յետոյ իջաւ Սուրբ Հոգին եւ նորոգեց առաքեալներին, նոյնպէս եւ այս կեանքի եօթ դարերից յետոյ Նա իջնելու է՝ նորոգելու արարածներին հանդերձեալի համար՝ ըստ մարգարէի. «Առաքում եւ Քո Հոգին եւ ստեղծում նրանց ու նորոգում երկրի երեսը»<sup>31</sup>:

Ինններորդ՝ իսրայէլացիները այս օրն էին մանգաղը սրած հունձի ելնում: Նոյնպէս եւ առաքեալներն այս օրը, վերցնելով Աստուծոյ խօսքի մանգաղը, զօրացած Սուրբ Հոգով, ելան մշակելու ողջ տիեզերքը, ինչպէս ասաց Տէրը. «Հունձքը բազում է, իսկ մշակները՝ սակաւարդ, աղաչեցէ՛ք հունձքի Տիրոջը, որ մշակներ առաքի իր հունձքին»<sup>32</sup>:

Տասներորդ՝ իսրայէլն այս օրը ստացաւ Օրէնքը՝ աստուածագիր տախտակներով. եւ նոյն օրն էլ Սուրբ Հոգին գրեց Նոր Օրէնքը առաքեալների սրտերում, ինչպէս ասուած էր մարգարէի միջոցով. «Այսուհետեւ իմ Օրէնքը կդնեմ նրանց ներսում եւ կգրեմ նրանց սրտերում քարեղէն տախտակների փոխարէն»<sup>33</sup>: Քանզի առաքեալների սրտերը Աստծով սրբագործուեցին ու նորոգուեցին: Եւ սա՛՛ երեք պատճառով: Նախ՝ որպէսզի ցոյց տրուի, որ նոյն Աստուած տունեց Հին եւ Նոր պատուիրանները: Ուստի, ինչպէս որ այնտեղ Սինա լեռան վրայ Նա յայտնուեց հրով, որոտմամբ ու փայլատակումներով, նոյնպէս եւ այստեղ, Սինա լեռան վրայ՝ Վերնատանը, Սուրբ Հոգին յայտնուեց որոտմամբ, փայլատակութեամբ եւ հողմով ու լցրեց ողջ տունը, ուր նստած էին առաքեալները, եւ հրեղէն լեզուների

բաժանուած՝ նստեց նրանց վրայ<sup>34</sup>: Երկրորդ՝ ինչպէս որ այնտեղ ծածկապէս իրեն յայտնեց մարգարէներին, այնպէս էլ այստեղ առաքեալներին բացայայտեց Երրորդութիւնը: Երրորդ՝ քանի որ մարդիկ չէին կարող արդարանալ Հին Օրէնքով, որովհետեւ նրանց սրտերը հիւանդ էին, մեր սրտերին տունեց Նոր Օրէնքը, որ կարող է արդարացնել ժողովուրդներին ու հեթանոսներին՝ բոլոր նրանց, ովքեր կհաւատան Ամենասուրբ Երրորդութեանը՝ Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն:

**Բ. Կիրակի օրը բոլոր մնացած օրերից առաւել մեծ եւ զարմանալի պատիւ ունի:**

Նախ՝ որովհետեւ կիրակին է բոլոր օրերի սկիզբն ու անդրանիկը՝ օր մին, ինչպէս ասաց Մովսէսը. «Եւ եղաւ երեկոյ, եւ եղաւ վաղորդայն՝ օր մի»<sup>35</sup>: Եւ նրա կրկնութեամբ են առաջանում միւս օրերը՝ երկրորդը, երրորդը եւ այլն, մինչեւ աշխարհի վախճանը:

Երկրորդ՝ այս օրը ստեղծուեցին երկինքն ու երկիրը, հրեշտակներն ու լոյսը եւ միւս տարրերը<sup>36</sup>:

Երրորդ՝ հնում այս օրը բազում աստուածախօսութիւններ եղան. ինչպէս օրինակ՝ Աստուած կիրակի օրը խօսեց Նոյի հետ, երբ նա դուրս եկաւ տապանից. նոյն այս օրը խօսեց Աբրահամի հետ, ինչպէս եւ Մովսէսի՝ Սինա լեռան վրայ. կիրակի օրը տրուեց Օրէնքը:

Չորրորդ՝ այս օրը պատուեց Քրիստոսի Յարութեամբ, նաեւ Սուրբ Հոգու իջմամբ առաքեալների վրայ:

31 Տե՛ս Սաղմ. ԺԴ 30:

32 Մատթ. Թ 37-38

33 Հմմտ. Երեմ. ԼԱ 33 եւ Բ Կոր. Գ 3:

34 Տե՛ս Գործ. Բ 2-3:

35 ԾՁ. Ա 5

36 Տե՛ս ԾՁ. Ա 1-5:

Հինգերորդ՝ այս օրն է լինելու մաղկանց համաճարարութիւնը, Քրիստոսի երկրորդ գալուստը եւ բոլոր գործերի հատուցումը: Այս օրն է ծագելու արդարների լոյսը: Սա է վերջին Օրն ու վախճանը: Քանզի երեք օր կայ առաջինը ստեղծման օրն է, միջինը՝ մինչեւ վախճանը, իսկ վերջինը՝ յարութեան Օրը, որը վերջն է եւ սկիզբը. վերջն է ժամանակի եւ սկիզբը՝ մշտնջենական յափտեանի: Նրան այլեւ երեկոյ չի յաջորդում, ինքն էլ չի յաջորդում գիշերուայ եւ մշտակայ լոյս է: Նրան չի երկրորդում որեւէ այլ օր, ինչպէս այս օրերը: Այն չի շարժում ժամերով, մասերով ու թոպէներով, ինչպէս այժմ է շարժում եւ փոփոխում: Այսպիսին են վերջին Օրուայ յատկութիւնները:

Եւ այսպէս, կիրակին առաւել պատուելի է, քան բոլոր միւս օրերը. որպէս օրերի սկիզբ՝ ըստ ստեղծման, միջին օր՝ ըստ շարժման, եւ վերջին օր՝ ըստ դադարման: Այն նաեւ կրկնակի պատուելի է իր անունով, քանզի կիրակի նշանակում է տէրունական, որովհետեւ նախ՝ իր մէջ միշտ կրում է Տիրոջը, ինչպէս ցոյց տրուեց, եւ երկրորդ՝ վախճանին արեգակի փոխարէն նա Սուրբ Երրորդութիւնը պիտի կրի իբրեւ անստուեր Հուսատու եւ արդարութեան իմանալի Արեգակ:

Այս ամենի պատճառով Սուրբ Հոգին կիրակի օրն իջաւ առաքեալների վրայ:

**Գ. Ինչո՞ւ Սուրբ Հոգին առաքեալների վրայ իջաւ երրորդ ժամին:**

Նախ՝ որովհետեւ Ադամից ու Եւայից այդ ժամին վերցուեց Հոգու շնորհը՝ կենդանութեան շունչը, որ Աստուած փչել էր Ադամի երեսին<sup>37</sup>:

Քանզի նա, խախտելով պատուիրանը, գրկուեց շնորհից, ինչպէս ասում են վարդապետները. «Երրորդ ժամին օձը հիծեց եւ խաբեց նախաձայր Եւայի միտքը»<sup>38</sup>: Ուստի նոյն ժամին էլ առաքեալներին պիտի տրուէր նոյն Հոգին, որը վերցուեց նախաստեղծից:

Երկրորդ՝ Քրիստոսին խաչեցին երրորդ ժամին, ինչպէս գրուած է. «Երրորդ ժամն էր, եւ Նրան խաչ հանեցին»<sup>39</sup>: Եւ քանի որ Սուրբ Հոգին խաչի պարգեւն է, ինչպէս ս. Յովհաննէս անտարանիչն է ասում՝ խաչը իբրեւ Յիսուսի փառք համարելով. «Գեռնեւ չկար Հոգին, քանզի Յիսուս դեռ չէր փառաւորուել»<sup>40</sup>, ապա այն ժամին, երբ կանգնեցուեց խաչը, եւ Քրիստոս փառաւորուեց, նոյն ժամին էլ պիտի տրուէր խաչի պարգեւը՝ Սուրբ Հոգին: Այս խորհրդով ենք խաչակնքում մեր դէմքը՝ յիշելով Սուրբ Հոգին, քանզի Նա խաչով պարգետուեց եւ այժմ էլ խաչով է իջնում մեզ վրայ:

Երրորդ՝ երրորդ ժամը, երբ Սուրբ Հոգին իջաւ առաքեալների վրայ, խորհրդանշում է այն, որ Սուրբ Հոգին մեզ տրում է երեք պահերի. նախ՝ սրտի զղջման պահին (քանզի երբ զղջում ենք մեղքերի համար, Սուրբ Հոգին իջնում է մեզ վրայ). երկրորդ՝ խոստովանութեան (երբ խոստովանում ենք մեր մեղքերը, Սուրբ Հոգին իջնում եւ քաւում է դրանք). եւ երրորդ՝ ապաշխարութեան ժամանակ, քանզի երբ ապաշխարութեան գործեր ենք կատարում<sup>41</sup>, Սուրբ Հոգին զօրացնում է

38 Տե՛ս «Երգ տեան Ներսիսի Հայոց կաթողիկոսի՝ առաջնայ յարագս Մեծի ուրբաբաբու գիշերին Անտարանաց», հատուած՝ «Ինծեայ յերրորդ ժամն օձին՝ զմիտս նախնայ մօրն Եւային...» («Ձայնաբար շարական», Վաղարշապատ, 1888, էջ 196):

39 Տե՛ս Մարկ. ԺԵ 25:

40 Յովհ. է՝ 39

41 Ընդհանուր առմամբ ապաշխարութեան գործեր են համարում աղօթքը, պահքը եւ ողորմութիւնը:

37 Տե՛ս Եւ. Բ 7:

մեզ եւ մեր գործերը հաճելի դարձնում Հայր Աստծուն՝ ըստ առաքեալի. «Երբ աղօթում ենք, Սուրբ Հոգին բարեխօս է լինում անբարբառ հեծութեամբ»<sup>42</sup>: Այսպէս եւ բոլոր միւս գործերում Սուրբ Հոգին զօրացնում է եւ օգնում, քանզի Աստուած է, որ յաջողում է մեր մէջ ամէն ինչ՝ կամենալն ու կատարելը, ըստ իր հաճութեան<sup>43</sup>: Արդ, այս երեք պահերն են հաճելի Աստծուն, ինչպէս որոնց Սուրբ Հոգին իջաւ երրորդ ժամին:

Չորրորդ՝ երրորդ ժամը խորհրդանշում է Սուրբ Երրորդութիւնը: Քանզի ինչպէս որ արարչագործութեան սկզբում արեգակի ստեղծուելուց երեք օր առաջ լոյսի գոյացալը<sup>44</sup> խորհրդանշում էր պարզ եւ իմանալի Սուրբ Երրորդութիւնը, այնպէս էլ Սուրբ Հոգու իջնելը երրորդ ժամին խորհրդանշում է Սուրբ Երրորդութեան երեք Անձերը՝ Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն<sup>45</sup>: Որովհետեւ սկզբում Հայրը բացայայտուեց մարգարէներին, որոնք ճանաչեցին Նրան, իսկ Որդուն՝ նուազաբար. եւ երբ Որդին մարմնացաւ, Նրան ճանաչեցին յայտնապէս, իսկ Սուրբ Հոգուն՝ նուազաբար. իսկ երբ Քրիստոս համբարձուեց, եւ Սուրբ Հոգին իջաւ առաքեալների վրայ, այնժամ յայտնապէս ճանաչուեցին Սուրբ Երրորդութեան Դէմքերը: Ուստի Տէրը հրամայեց. «Գնացէ՛ք, մկրտեցէ՛ք նրանց Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով»<sup>46</sup>: Եւ մենք, երբ փառք ենք տալիս Աստծուն, ասում ենք. «Փա՛ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն»:

Ահա այս է խորհրդանշում երրորդ ժամը,

42 Տե՛ս Հոով. Ը 26:

43 Տե՛ս Փլպ. Բ 13:

44 Արեգակը միւս լուսատուների հետ ստեղծուեց չորրորդ օրը, իսկ լոյսը՝ առաջին [տե՛ս. Ծն. Ա. 3, 14-19]:

45 Այս նախադասութեանը յաջորդող երրորդաբանական մի հատուած տղն թարգմանութիւնից յապատած է:

46 Տե՛ս Մատթ. ԻԸ 19:

երբ Սուրբ Հոգին իջաւ առաքեալների վրայ:

\*\*\*

Այժմ համառօտ մեկնենք մարգարէի խօսքը. «Երբ Երկնաւորը թագաւորներին հաւաքի այնտեղ, Սաղիմի վրայ ձիւն կտեղայ»:

Այստեղ թագաւոր է անուանում առաքեալներին՝ ըստ մարգարէի. «Նրանց իշխաններ կկարգես ամբողջ երկրում»<sup>47</sup>, քանզի նրանք Քրիստոսով ողջ աշխարհի թագաւորներն ու իշխանները եղան:

Նախ՝ այստեղ՝ երկրի վրայ քարոզելով ու բոլորին խրատելով՝ նրանք եղան բոլոր ազգերի առաջնորդները եւ իշխեցին թագաւորներին ու իշխաններին՝ առաջնորդելով դէպի հաւատ եւ բարի գործեր՝ այն, ինչ չկարողացան անել աշխարհի մեծամեծ թագաւորները, որոնք շատ հնարքներ գործադրեցին բռնութեամբ, իսկ բարի գործերում թերացան: Մինչդեռ առաքեալները զօրացան Սուրբ Հոգով եւ գերեցին նրանց՝ հաւատի բերելով, ինչպէս ասում է առաքեալը. «Մեր զինուորութեան զէնքը մարմնաւոր չէ, այլ՝ զօրաւոր՝ Աստուծոյ կողմից. եւ գերում ենք ամենայն հպարտացած միտք ի հնազանդութիւն Քրիստոսին»<sup>48</sup>:

Երկրորդ՝ նրանք թագաւորեցին եւ իշխեցին մարդկանց հոգու եւ մարմնի, կեանքի ու մահուան վրայ՝ առաւել, քան երկրի թագաւորները, քանզի նրանք իշխում են միայն մարմնի, բայց ո՛չ հոգու վրայ եւ իրենց չարութեամբ կարող են սպանել, սակայն չեն կարող յարութիւն տալ: Իսկ առաքեալները կարող էին ե՛ր գրկել կեանքից, ե՛ր կեանք պարգեւել, ինչպէս որ Պետրոսը

47 Սաղմ. ԽԵ 16

48 Տե՛ս Բ կոր. Ժ 4-5:

մէն-մի խօսքով պատժեց Անանիային ու Սափի-  
րային<sup>49</sup>, իսկ Տաքիթային յարութիւն տուեց<sup>50</sup>:  
Նոյնն էին անում եւ միւս առաքեալները, որոնք  
իշխանութիւն ունէին հոգու եւ մարմնի վրայ՝ կա-  
պելու եւ արձակելու երկրում եւ երկնքում, ինչպէս  
ասաց Քրիստոս. « Ինչ որ կապէք երկրի վրայ,  
կապուած պիտի լինի երկնքում »<sup>51</sup>: Միջնդեռ  
երկրի թագաւորները միայն մարմնի վրայ են իշ-  
խում եւ սպանում, սակայն սպանելուց յետոյ  
ոչինչ չեն կարող անել, ինչպէս Տէրն ասաց<sup>52</sup>:  
Այսպէս առաքեալները կրկնակի թագաւորեցին  
երկրի վրայ:

Երրորդ՝ նրանք թագաւորելու են, երբ Քրիս-  
տոսի հետ նստեն տասներկու աթոռների՝ դա-  
տելու Իսրայէլի տասներկու ցեղերին<sup>53</sup> եւ քննելու  
բոլոր ազգութիւններին, ինչը չեն կարող անել  
երկրի թագաւորները:

Չորրորդ՝ նրանք թագաւորներ են անվախ-  
ճան յաիտեանում՝ Քրիստոսի հետ, ինչպէս ա-  
սում է առաքեալը. « Եթէ համբերենք, Նրա հետ  
կթագաւորենք »<sup>54</sup>:

Արդ, այս չորս եղանակով առաքեալները  
թագաւորներ եւ իշխաններ են երկնքում ու երկրի  
վրայ: Եւ այս խորհրդով է մարգարէն ասում.  
« Երբ Երկնաւորը թագաւորներին հաւաքի այն-  
տեղ, Սաղիմի (այսինքն՝ Երուսաղէմի) վրայ ձիւն  
կտեղայ »:

Երբ առաքեալները հաւաքուել էին վերնա-  
տանը՝ համաձայն Փրկչի հրամանի, թէ՛ « Նստե-  
ցէ՛ք Երուսաղէմում, մինչեւ որ զօրութիւն ստա-

նաք ի վերուստ »<sup>55</sup>, եւ սպասում էին խոստա-  
ցուած անտիսին, յանկարծ երկնքից սաստիկ  
հնչին, որոտ ու փայլակ եղաւ, եւ Սուրբ Հոգին  
ձիւնաբեր հողմի պէս իջաւ նրանց վրայ՝ բոլորին  
լցնելով իր գիտութեամբ: Այս էջքը մարգարէն  
ձեան հետ է համեմատում՝ տասներկու պատճա-  
ռով:

Նախ՝ ձիւնն իջնում է երկնքից եւ ամպով.  
նոյնպէս եւ Սուրբ Հոգին իջնում է Երկնքից, այ-  
սինքն՝ Հօրից, իսկ ամպը մարմնացած Բանն է,  
որ հայրական ծովից վերցնելով Սուրբ Հոգին՝  
սփռեց առաքեալների վրայ եւ տակաւին պար-  
գեւում է բոլորին:

Երկրորդ՝ ձիւնը ճօր է ու թեթեւ. եւ Սուրբ  
Հոգին խոնարհութեան Հոգի է՝ հակառակ դիա-  
յին հպարտացած ոգու, եւ իջնում է հեզերի ու  
խոնարհների վրայ, քանզի Աստուած չի ար-  
համարում խոնարհ հոգին<sup>56</sup>. « Ես ո՞ւմ վրայ  
կհանգչեմ, եթէ ոչ՝ հեզերի ու խոնարհների եւ  
նրանց, ովքեր դողում են իմ խօսքերից »<sup>57</sup>:

Երրորդ՝ ձիւնը յագեցնում է ծարաւը. նոյն-  
պէս եւ Սուրբ Հոգին յագեցնում է իրեն կարօ-  
տողների ծարաւը եւ մխիթարում: Դաւիթ մար-  
գարէն կարօտում էր Աստծուն եւ ասում.  
« Ծարաւ է իմ անձը Քեզ, Աստուած, անապատ  
եւ անջուր հողի պէս. ե՞րբ պիտի գաս ու ցոյց  
տաս Քո երեսը »<sup>58</sup>: Այսպէս եւ Սուրբ Հոգին յա-  
գեցրեց առաքեալների կարօտն ու ծարաւը, որի  
համար էլ Մխիթարիչ կոչուեց<sup>59</sup>: Տէրն ասում էր.  
« Ով ծարաւ է, թող գայ ինձ մօտ եւ խմի Կեանքի

49 Տե՛ս Գործ. Ե 3-10:

50 Տե՛ս Գործ. Թ 40:

51 Մատթ. ԺԸ 18

52 Տե՛ս Մատթ. Ժ 28, Ղով. ԺԲ 4:

53 Տե՛ս Ղով. ԻԲ 30:

54 Բ Տիմ. Բ 12

55 Հմտ. Գործ. Ա 4:

56 Սաղմ. Ծ 19

57 Տե՛ս Ես. 42 2:

58 Հմտ. Սաղմ. ՄԽԲ 6, 7:

59 Տե՛ս Յովն. ԺԶ 7:



չրից»<sup>60</sup>, որ Սուրբ Հոգին է:

Չորրորդ՝ ձիւնը սառն է եւ զովացնում է տապը. այսպէս եւ Սուրբ Հոգին հաճոցնում ու բարեխառնում է սատանայի փորձութիւնների եւ աշխարհի ցանկութիւնների տապը:

Հինգերորդ՝ ձիւնը յստակ է ու մաքուր. Իր բնութեամբ այսպիսին է եւ Սուրբ Հոգին եւ Իր շնորհով մեզ սրբում է մեղքերից:

Վեցերորդ՝ ձիւնը ճերմակ է. եւ Սուրբ Հոգին մաքրում է մեղքերից ու ճերմակեցնում բոլոր նրանց, ովքեր մկրտում են Իրենով. «Լուա՛, եւ ձիւնից առաւել սպիտակ կլինես»<sup>61</sup>, - ասում է Դաւիթ մարգարէն: Նաե՛ւ նրանց, ովքեր խոստովանում են եւ ապաշխարում՝ ըստ Եսայու. «Եկէք խօսեցէ՛ք միմեանց հետ (այսինքն՝ խոստովանեցէ՛ք), եւ եթէ ձեր մեղքերը մրի պէս սեւ լինեն, ձեան պէս կճերմակեցնեն. ու եթէ որդան կարմրի պէս արեամբ ներկուած լինեն, ասրի<sup>62</sup> պէս մաքուր կդարձնեն»<sup>63</sup>:

Եօթերորդ՝ ձիւնը լուսափայլ է. նոյնպէս եւ Սուրբ Հոգին փայլատակելով՝ հրակերպ երեսաց՝ բաժանուած հրեղէն լեզուների, ինչպէս խոստացուել էր. «Դուք կմկրտուէք Սուրբ Հոգով եւ հրով»<sup>64</sup>:

Ութերորդ՝ ձիւնն իջնում է հողմով. նոյնպէս եւ Սուրբ Հոգին հողմով իջաւ Վերնատուն եւ լցրեց ամբողջ տունը, ուր նստած էին առաքելուները<sup>65</sup>: Քանզի ինչպէս որ նախկինում բարելոնեան աշտարակաշինութեան ժամանակ Հոգին հողմով իջաւ, աներեց աշտարակը եւ մի լեզուն

բաժանեց եօթանասուներկուսի, այնպէս էլ Վերնատանը հողմով իջաւ, միառորեց առաքելուներին Եկեղեցու անխախտ միութեան մէջ եւ եօթանասուներկու լեզուները հաւաքեց մէկ անձի մէջ, որովհետեւ առաքելներն այլեայլ լեզուներ էին խօսում, ինչ որ Սուրբ Հոգին նրանց բարբառել էր տալիս<sup>66</sup>:

Իններորդ՝ ձիւնը ծածկում է եւ ինքն էլ՝ ծածկում. նոյնպէս եւ Սուրբ Հոգին ծածկում ու զարդարում է սուրբերին զանազան շնորհներով՝ քարոզելու, իմաստութեան, գիտութեան, լեզուներ խօսելու, թարգմանելու եւ այլն: Իսկ անսուրբներից ծածկում է եւ Իր շնորհները թաքցնում նեղաւոր խորհուրդներից, ինչպէս ասում է Սողոմոնը. «Իմաստութեան Սուրբ Հոգին փախչում է նենգութիւնից ու չար խորհուրդներից»<sup>67</sup>:

Տասներորդ՝ ձիւնը տեղում է անդադար ու ետ չի դառնում. նոյնպէս եւ Սուրբ Հոգին անդադար թխում է Հօրից ու հանգչում սուրբերի վրայ մկրտութեան, դրոշմի, քահանայութեան եւ միւս խորհուրդների միջոցով եւ այլևս չի հեռանում նրանցից, ինչպէս որ առաքելներից, որովհետեւ այսպիսի շնորհներն՝ այլևս չեն բաժանում անձից, քանի որ կնիք են՝ դրուած հոգու վրայ: Այս էր նշանակում ասուածը. «Սուրբ Հոգին ադաւանու պէս իջաւ եւ մնաց Նրա վրայ»<sup>68</sup> որպէս մեր Գլխի, եւ ապա Նրանով՝ Եկեղեցու անդամների. եւ այլևս չբաժանուեց մարդկային բնութիւնից:

Տասնէկերորդ՝ ջրի ու հրի վրա: ձիւն չի նստում. նոյնպէս եւ Սուրբ Հոգին չի իջնում բրդշախոն աղտեղութեամբ զինացած<sup>69</sup> եւ աշխար-

60 Տե՛ս Յովհ. է 37, 38:

61 Սաղմ. Ծ 9

62 Ասր - ոչխարի սպիտակափայլ բուրդ

63 Տե՛ս Եւ. Ա 18:

64 Տե՛ս Մատթ. Գ 11, Դով. Գ 16:

65 Տե՛ս Գործ. Բ 2:

66 Տե՛ս Գործ. Բ 4:

67 Տե՛ս. Իմաստ. Ա 5:

68 Տե՛ս Յովհ. Ա 32:

69 Գիճոյթիւն - խոնամութիւն

հի սիրով վառուղ անձանց վրայ: Այս մասին է  
ասում Յակոբոսը. «Օճացողներ, չգիտե՞ք, որ  
սերը աշխարհի<sup>70</sup> հանդէպ՝ թշնամութիւն է Աս-  
տուծոյ հանդէպ. ով սիրում է աշխահը, իր անձը  
թշնամի է դարձնում Աստուծոյ»<sup>71</sup>:

Տասներկուերորդ՝ ձիւնն իջնում է նախ լեռնե-  
րի կատարներին եւ ապա՝ ցածրադիր վայրերին.  
այսպէս եւ Սուրբ Հոգին նախ իջնում է առա-  
քեալների, մարգարէների ու քահանաների եւ  
ապա նրանց միջոցով՝ հաւատացեալների վրայ՝  
ըստ այսմ. «Իդի պէս իջնում է Ահարոնի գլխին  
ու մօրուքին եւ մօրուքից՝ նրա զգեստի գրպան-  
ներին»<sup>72</sup>: Քանզի այժմ գլուխն են կաթողիկոսն  
ու եպիսկոպոսները, մօրուքը՝ քահանաները, որ  
նրանցից դէպի մեզ են խոնարհուած շնորհով.  
զգեստը ողջ հաւատացեալ ժողովուրդն է, իսկ  
գրպանները Եկեղեցու վարդապետներն են՝  
Սուրբ Հոգու գիրն ու իմաստութիւնը պահպա-  
նողները, որ ուսուցանում են բոլոր հաւատացեալ  
քրիստոնէաներին, որոնց եւ թող Աստուած ար-  
ժանացնի Իր պարգեւներին եւ Սուրբ Հոգու  
շնորհների մշտարուխ եւ առատ հեղմանը. մեր  
քահանայապետին, որ Քրիստոսի փոխանորդն է  
քահանայական ուխտի լրմամբ, եպիսկոպոսնե-  
րին, քահանաներին, սպասաւորներին եւ առհա-  
սարակ ողջ ժողովրդին՝ ի փառս եւ ի պարծանս  
մեր ճշմարիտ Քահանայապետ եւ մեր Գլուխ  
Յիսուս Քրիստոսի, Որի հետ Հօրը եւ Սուրբ Հո-  
գուն վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ  
այժմ եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

70 Աշխարհ - այստեղ՝ աշխարհիկ, երկրաբակ կեանք.  
անցաւոր եւ մեղակամ վազեքներ ու հրապոյրներ:

71 Տե՛ս Յակ. Գ 4:

72 Սաղմ. ԾԼԳ 2